Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց

Թեմա՝ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ԴԱՍԵՐԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ>

Վերապատրաստող, մենթոր՝Դ. Վարժապետյան

Ուսուցիչ՝ Նաիրա Սեդրակյան

Ներածություն----------**3**

Գլուխ 1. Դասերի տեսակները: Ավանդական և ոչ ստանդարտ դասերի տարբերությունները ----------**4**

1.1 Դասի ոչ ստանդարտ ձևերը----------**--5**

Գլուխ 2. Ոչ ստանդարտ դասերին կիրառվող մեթոդները---------**-6-11**

2.1.Ոչ ստանդարտ դասերի պլաններ----------**12-13**

Եզրակացություն----------**14**

Օգտագործված գրականության ցանկ----------**15**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև:

Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթադաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Դասը դասկարգում են ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների և բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների:

Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետևյալ տիպերը՝

- Նոր ուսումնական նյութի յուրացման դաս
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)
- Ընդհանրացման և համակարգման դաս
- Համակցված դաս
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս

Դասը որպես ուսուցման ձև դասվում է կրթության դաս-դասարանական համակարգին: Այն համարվում է ուսուցման կազմակերպման կոլեկտիվ ձև ,
որին հատուկ են մասնակիցների մշտական կազմ, պարապմունքների հստակ ժամանակացույց (45 րոպե) և ուսումնական պրոցեսի վերահսկողություն:

Մանկավարժի մասագիտությունն ընտրած յուրաքանչյուր անձ էլ գիտակցում է ,որ այլևս բավարար աշակերտների նկատմամբ ուսուցչի ջերմ ու սիրառատ վերաբերմունքը, ոչ էլ սոսկ ըմբռնման, անձնական նախընտրության կամ ավանդական մտածելակերպի հիման վրա դասավանդման որևէ մեթոդի կիրառման հիմնավորումը: Ժամանակակից ուսուցիչները պարտավոր են կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնց արդյունավետության մեջ համոզվել են գործնականում: Դասավանդումն ուսուցչի փորձի և գործնական աշխատանքի ընթացքում կուտակած իմաստության զուգակցման արվեստն է: Հասարակության մեջ ուսուցչին մասնագիտական կարգավիճակ է տրվում: Նրանից պահանջվում է լավագույն մեթոդների օգնությամբ աշակերտներին զինել տարրական հմտություններով ու գիտելիքներով: Ուսուցիչը պետք է պատրաստ լինի հնարավորինս մեծ թվով անակնկալների, պատրաստի օրինակներ ունենա և կարողանա դրանք օգտագործել կամ ուշադրություն գրավելու, կամ որոշակի գաղափարներ լիարժեք բավարարելու համար՝ կախված աշակերտի արձագանքից;

Գլուխ 1. Դասերի տեսակները: Ավանդական և ոչ ստանդարտ դասերի տարբերությունները

Եթե մենք սովորեցնենք այնպես, ինչպես սովորեցրել ենք երեկ, ապա մենք երեխաներից կգողանանք նրանց վաղվա օրը: Ջոն Դյուի

Այլընտրանքային դասերը պետք է լինեն ստանդարտից դուրս, ունենան հետևյալ սկզբունքները.

- Լինեն ոչ ալգորիթմային, գործողությունների կարգը նախապես չպետք է հստակեցված լինի:
- Պետք է լինի բարդ: Ճանապարհը տեսանելի չլինի:
- Երբեմն ներկայացվի բազմակի իրավիճակներ, որոնցից յուրաքանչյուրն ունենա իր արժեքն ու նպատակները՝ մեկ լուծում գտնելու փոխարեն:
- Սեփական մտքերի ինքնակառավարումը պարտադիր է:
- Պահանջվում է բազմաթիվ չափանիշների կիրառում, որոնք երբեմն հակասության մեջ են գտնվում մեկը մյուսի հետ:
- Պահանջվում է ջանքեր, հսկայական մտավոր աշխատանք, մշակում և եզրահանգում:
- Երբեմն առկա են անհստակության տարրեր: Հանձնարարության հետ կապված ոչ ամեն բան ի սկզբանե հստակ:

Այսպիսի կառույցը հնարավորություն է տալիս աշակերտին սովորել մտածել, հիմնվելով սովորողների մտածողության բնածին առավել զարգացած ձևերի վրա՝ խթանվում է երեխաների օժտվածության զարգացումը, նպաստում մասնագիտական կողմնորոշմանը, ինչը միշտ էլ համարվել է մանկավարժության գերնպատակը:

- **1.2.Դասի ոչ ստանդարտ ձևերն են՝**

- դերային խաղեր,
- դաս-ներկայացում,
- հեքիաթային դիպաշարի կատարում,
- ստուգատես,
- մտապատկերների դաս,
- դաս-խաղ,
- գործարար խաղ,
- դաս-ստուգարք,
- դաս-փոխուսուցանում,
- դաս-ճանապարհորդություն,
- կլոր սեղան կամ կոնֆերանս,
- դաս-մրցույթ,
- դաս-մամլո ասուլիս,
- բաց մտքերի դասավանդման,
- դաս-երկխոսություն,
- դաս-վիկտորինա,
- խաղ «Հետաքննությունը վարում են գիտակները»,
- արդիական հարցազրույցներ,
- գիտելիքների աճուրդ,
- իմիտացիոն-դերային մոդելավորում,
- դաս-բանավեճ,
- ուսանողների մտածելակերպի մոդելավորում,
- դաս-մրցաշար,
- դերային խաղ-բիզնես,
- դաս-Էվրիկա,
- դաս-դասախոսություն,
- խաղ "Կախարդական ծրար»,
- միջառարկայական ինտեգրված դաս,
- ստեղծագործական դաս և այլն։

Գլուխ 2. Ոչ ստանդարտ դասերին կիրառվող մեթոդները:

Գոյություն ունեն ոչ ստանդարտ դասերին կիրառվող դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում են 3 խմբի՝



- Պասիվ. այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «օբյեկտ», որը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիքների աղբյուրի՝ ուսուցչի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:

- Ակտիվ. Այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, ուսուցչի հետ երկխոսության մեջ են մտնում: Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը՝ ուղղված աշակերտից ուսուցչին և ուսուցչից՝ աշակերտին:

3.

3.

Փոխներգործուն.

(անգլերենից

թարգմանած inter - «միջև» act – «Գործողություն») թույլ են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին փոխազդել միմյանց վրա։ Այս մեթոդները առավել համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մոտեցումներին, քանի որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ։

Ուսուցիչը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպիչի, ֆասիլիտատորի, խմբի ղեկավարի, աշակերտների նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծողի դերում։

Բացի դրանից, փոխներգործուն մեթոդի հիմքում ընկած է մասնակիցներից յուրաքանչյուրի փորձի միջոցով ուղղակի ազդեցությունը միմյանց վրա, քանի որ փոխներգործուն մեթոդներից շատերը իրականացվում են հենց մասնակցի փորձի շնորհիվ, ընդ որում ոչ միայն կրթական։ Նոր գիտելիքը և կարողությունը ձևավորվում են հենց այսպիսի փորձի հիման վրա։

Ըստ գործունեության տեսակի մեթոդները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1.Բացատրական-զննական
2.Վերարտադրողական
3.Խնդրահարույց ուսուցման
4.ՈՒսուցողական-ճանաչողական գործունեության կազմակերպման
5.Խթանման և մոտիվացիայի
6.Վերահսկման և ինքնավերահսկման

7.Ինքնուրույն ճանաչողական գործունեության
8.Համակարգված ուսուցման

Ըստ կառուցվածքի և կիրառման մեթոդները լինում են՝

1. Բանավոր

- բացատրություն- բանավոր փոխադրության կամ վերարտադրության ձև է, որտեղ բացահայվում են նոր հասկացություններ, տերմիններ, հաստատվում են պատճառահետևանքային կապերը և կախվածությունները, օրինաչափությունները, այսինքն բացատրվում է այս կամ այն երևույթի տրամաբանական բնույթը։
- պատնվածք- ուսումնական նյութի ներկայացման ձև է, որը բացառապես նկարագրողական բնույթ ունի (դիպաշար, զննական-ցուցադրական, տեղեկատվական)։
- տպագիր բառի հետ աշխատանք (գիրք) – այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտին ուսուցչի անմիջական ղեկավարության տակ ինքնուրույն կազմակերպել ճանաչողական գործընթացը։
- փոխադրություն – սա ուսումնական գործընթացի մենախոսական ձև է, որի դիդակտիկ նշանակությունն այն է, որ այս մեթոդի շնորհիվ աշակերտներին է փոխանցվում, հաղորդվում, առաջարկվում մարդկության կուտակած ընդհանրացված գիտելիքները, ցուցադրվում են գործունեության օրինակները, իսկ աշակերտները պետք է հասկանան, հիշեն և վերարտադրեն յուրացված գիտելիքները։
- պատմողական – նյութի փոխադրության, ներկայացման ձև է, որտեղ կապակցված պատմվում է ժամանակի ընթացքում կատարված կոնկրետ փաստերի, իրադարձությունների,
  գործընթացների վերաբերյալ։ Այն կարող է լինել սեղմագիր կամ դիպաշար ունեցող հետաքրքիր պատմվածք։
- նկարագրություն – նյութի ներկայացման ձև է, որտեղ հաջորդաբար թվարկում են շրջպատող իրականության երևույթների և առարկաների որակը, հատկությունները, առանձնահատկությունները, հատկանիշները։
- խնդրահարույց փոխադրություն – սա ուսուցչի կողմից առաջադրված խնդիրների և հարցերի լուծմանը միտված աշակերտների ինքնուրույն աշխատանքի (որպես կանոն՝ մտվոր) հետ համադրվող փոխադրություն է։
- զրույց – հարց-պատասխան հիմնաքննարկումների, երկխոսությունների ժամանակ աշակերտների տեղեկատվություն ստանալու ձև է։ Զրույցի տեսակներն են՝

катехизическая (աշակերտների պատասխանները ներառում են վերարտադրողական գործունեություն) փորձարարական (ենթադրում է արդյունավետ, ստեղծագործ գործունեություն)։ Փորձարարական զրույցի առանձնահատկությունենն են՝ մասնակիցները գիտակցում են զրույցի նպատակը

բոլոր հարցերն այնպես են ընտրվում, որ աշակերտները հնարավորություն են ստանում ինքնուրույն եզրահանգումներ անել կամ գուշակել պատասխանը

զրույցի ընթացքում նախատեսվում են պարզ և բարդ հարցեր, վերջիններս ձևակերպվում են որպես խնդիրներ, իսկ դրանցում առանձնացվում են առավել մասնավոր հարցերը

խնդրի յուրաքանչյուր հարցի լուծմանը հետևում է ուսուցչի կողմից աշխատանքի արդյունքները ամփոփող եզրակացությունը:

- Դիտարկում – զգայարանների միջոցով առարկաների և երևույթների ուղղակի, նպատակասլաց ընկալումն է ճիշտ պատկերացումների և հասկացությունների, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով:
- Փորձեր – աշակերտների կողմից տարբեր սարքավորումների հետ աշխատելու կարողություններ, գործնական և հետազոտական կարողություններ պահանջող նոր նյութի ուսումնասիրմանը միտված ինքնուրույն աշխատանք է:
- Ուսուցման գործնական մեթոդներ – աշակերտի գործունեության այնպիսի տեսակ է, որի ժամանակ գործնական աշխատանքների (գրավոր և բանավոր վարժություններ, գործնական և լաբորատոր աշխատանքներ, ինքնուրույն աշխատանքների որոշ տիպեր) կատարման ընթացքում տեղի է ունենում գործնական կարողությունների և հմտությունների ձևավորում և կատարելագործում:
- Վարժություններ – որևէ գործողության պլանային կազմակերպված կրկնակատարում է, այդ գործողության կատարելագործման կամ յուրացման նպատակով:
- Քննադատական մտածողություն - քննադատական մտածողությունը դասավանդման մեթոդ է: Այն հնարավոր է կիրառել բոլոր առարկաների դասավանդման ժամանակ: Քննադատական մտածողության զարգացումը կարող է սկսվել մանկապարտեզից՝ հասնելով մինչև բուհական լսարան:

«Քննադատական մտածողություն» տերմինը սահմանվել է Ամերիկյան փիլիսոփայության ասոցիացիայի կողմից որպես «նպատակաուղղված, ինքնակարգավորող դատողություն, որն ավարտվում է մեկնաբանությամբ, վերլուծությամբ, գնահատմամբ և ինտերակտիվությամբ, ինչպես նաև ակնհայտ, հայեցակարգային մեթոդաբանական կամ ենթատեքստային մտքերի բացատրմամբ, որոնց վրա հիմնված է այդ դատողությունը: աշակերտի իդեալական քննադատական մտածողությունը սովորաբար կապված է հետաքրքրասիրության, լավ տեղեկացվածության, վստահության պատճառի, ոչ կանխատրամադրվածության, ճկունության, գնահատման մեջ արդարամտության, սեփական կանխակալ կարծիքի հետ բախվելիս ազնվության, դատողությունների մեջ խելամտության հետ, ցանկության հետ վերանայելու, պարզելու խնդիրներն ու բարդ հարցերը, անհրաժեշտ տեղեկություն փնտրելիս հետևողականության, չափանիշներն ընտրելիս՝ խելամտության, այնպիսի արդյունքներ փնտրելու մշտականության հետ, որոնք նույնքան ճշգրիտ են, որքան սկզբնաղբյուրները: Սա մի համադրություն է, որ կապում է քննադատական մտածողության զարգացումը

ռացիոնալ և դեմոկրատական հասարակության հիմքերի ըմբռնման հետ: Քննադատական մտածողությունը ցանկալի վերջնական արդյունքն ստանալու հավանականությունը մեծացնող ռազմավարությունը կամ ճանաչողական տեխնիկայի կիրառումն է: Այս սահմանմամբ մտածողությունը բնութագրում է որպես վերահսկելիությամբ, հիմնավորվածությամբ, և նպատակասլացությամբ առանձնացվող երևույթ: Այն մտածողության այնպիսի տեսակ է, որին անդրադառնում են խնդիրների լուծման, եզրակացությունների ձևակերպման, հավանական գնահատման և որոշումների ընդունման ժամանակ: Ընդ որում մտածող մարդը կիրառում է այնպիսի հմտություններ, որոնք հիմնավորված և արդյունավետ են կոնկրետ իրավիճակում և լուծվող խնդրի տեսակի համար:

Քննադատական մտածողությունն օգտագործող աշակերտին բնորոշ են հետևյալ հատկությունները՝

Պլանավորելու պատրաստակամություն. մշտապես վարժվելով, յուրաքանչյուրը կարող է իր մեջ ձևավորել պլանավորելու սովորություն:

Ճկունություն

Հաստատակամություն

Սեփական սխալներն ուղղելու պատրաստակամություն

Գիտակցում. այն ենթադրում է նպատակին հասնելու ճանապարհին սեփական գործողությունների դիտարկում: Քննադատաբար մտածող աշակերտները զարգացնում են սեփական մտածելու գործընթացի ինքնակառավարման սովորույթ:

Փոխզիջումային լուծումների որոնում. արդի ժամանակաշրջանում գործունեության խմբային ձևերը գերակշռող են: Քննադատաբար մտածող աշակերտին անհրաժեշտ է տիրապետել ինչպես զարգացած հաղորդակցման հմտություններին, այնպես էլ մեծամասնությանը բավարարող որոշումներ գտնելու կարողություններին:

Մտավոր ունակությունների դասակարգման պատկերային արտացոլումներից մեկը կոչվում է «Բլումի բուրգ»: Այս մոդելը ստեղծվել է 20-րդ դարի 50-ական թվականներին՝ ամերիկացի հոգեբան Բենջամին Բլումի կողմից: Առ այսօր այն հանդիսանում է ուսումնական գործունեության ցանկացած ուղղության կրթական արդյունքի նկարագրման ամենապատկերավոր, ամենապարզ և հարմար եղանակը

Բլումը ոչ միայն նկարագրեց մտավոր կարողությունները, այլ դրանք բաժանեց ըստ բարդության աստիճանների: Բլումի համակարգում առանձնացված են 6 մակարդակներ՝

- գիտելիքներ/ վերարտադրություն
- ըմբռնում
- կիրառություն
- վերլուծություն
- համադրում
- գնահատում

և
նկարագրված են մասնակիցների տվյալ մակարդակին հասնելուն միտված հստակ գործողությունները: Բուրգի հիմքում ընկած է գործունեության մոտեցումը, այսինքն մասնակիցների մտավոր կարողությունները հստակեցված են բայի միջոցով, որի օգնությամբ, մի կողմից, կարելի է աշակերտի առաջ շատ ճշգրիտ և հստակ դնել ուսումնական խնդիրը, մյուս կողմից ամրագրել և գնահատել ձեռք բերված արդյունքները: Բլումյան « HYPERLINK "http://wiki.iteach.ru/images/d/d2/%D0%A2%D0%B0%D0%BA%D1%81%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D1%8F_%D0%BC%D1%8B%D1%81%D0%BB%D0%B8%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C%D0%BD%D1%8B%D1%85_%D1%83%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B9_%D0%91%D0%BB%D1%83%D0%BC%D0%B0_(%D0%B3%D0%BB%D0%B0%D0%B3%D0%BE%D0%BB%D1%8B_%D0%B4%D0%B5%D0%B9%D1%81%D1%82%D0%B2%D0%B8%D1%8F).doc"գործունեության բայերը» բանալի-բառեր են, որոնք կարելի է անվերապահորեն կիրառել հարցադրումների և ուսումնական խնդիրների ձևակերպման համար. բուրգի ստորին բաժանման ամենապարզ առաջադրանքների համար՝ անվանել, ցույց տալ, թվարկել... և այլն, մինչև բուրգի գագաթի ամենաբարդ առաջադրանքները՝ հիմնավորել, ապացուցել, գնահատել: Բուրգի գագաթը համապատասխանում է քննադատական մտածողության մակարդակին: Բլումի բնօրինակում « HYPERLINK "http://wiki.iteach.ru/images/d/d2/%D0%A2%D0%B0%D0%BA%D1%81%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D1%8F_%D0%BC%D1%8B%D1%81%D0%BB%D0%B8%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C%D0%BD%D1%8B%D1%85_%D1%83%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B9_%D0%91%D0%BB%D1

%83%D0%BC%D0%B0_(%D0%B3%D0%BB%D0%B0%D0%B3%D0%BE%D0%BB%D1%8B_%D0%B4%D0%B5%D0%B9%D1%81%D1%82%D0%B2%D0%B8%D1%8F).doc"գործունեության բայերը» մոտ 300-ն են, սակայն դժվար թե որևէ ժամանակակից ուսուցիչ իր պահուստում առաջադրանքների այդքան բազմազան տեսականի ունենա: Շուրջ 60 տարվա գոյության ընթացքում Բլումի բուրգը ոչ միայն ժամանակավրեպ չի, այլ ընդհակառակը ձեռք է բերել հանրահայտություն ուսուցիչների մեծաքանկ համայնքի շրջանում: Բացի դրանից այն լրամշակվում և փոփոխության է ենթարկվում: Իսկ Web 3.0 երևույթի պարագայում Բլումի բուրգի նկատմամբ հետաքրքրությունը նոր ուժով ժայթքեց: Պարզվեց, որ հանրահայտ բուրգը կարող է ներառել ոչ միայն աշակերտների գործողությունների նկարագրությունները, այլ նաև այդ գործողությունների արդյունքը: Ընդ որում թվային դարաշրջանում արդյունքները բոլորովին այլ տեսք ունեն՝ մեդիա-սահիկահանդեսներ, տեսանյութեր, ձայնագրություններ, համակարգչի միջոցով արված տրամագրեր և դիագրամներ: Արդի մանկավարժական մեթոդիկան առաջարկում է քննադատական մտածողության զարգացման վարժություններ կատարել: Այդ վարժությունների ընտրությունը ելնում է հետևյալ պահանջներից, համաձայն որոնց քննադատաբար մտածող

2.1.Ոչ ստանդարտ դասերի պլաններ

Օրվա դասի պլանավորում

Դասարան՝ III բ

Առարկան՝ մայրենի

Ուսուցչուհի՝ Ն. Վարդանյան

Դասի թեման՝ <<Լինում է, չի լինում՝մի հեքիաթ է լինում>>

Դասի նյութը՝ <<Պապիկը, որը չէր կարողանում հեքիաթ պատմել>>

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի նպատակները՝ Աշակերտները՝

- կամրակայեն երկխոսությունները հասկանալով , արտահայտիչ կարդալու և վերարտադրելու կարողությունները,
- կկարողանան կարծիքներ և տպավորություններ արտահայտել բնագրի շուրջ,
- կկրկնեն բայերի և գոյականների մասին ունեցած գիտելիքները:

Դասի ընթացքը

1. **Խթանում**

Մեթոդը՝ <<Գուշակիր , թե ով է մեր հյուրը>>

Խթանման փուլը սկսել <<Գուշակիր, թե ով է մեր հյուրը >> հնարը կիրառելով:

Տիկնիկ մարդուկի խոսքը.

<<Բարև, սիրելի՛ աշակերտներ, ես ժողովրդական բանահյուսության ամենատարածված ու ամենասիրելի նմուշներից եմ: Ես ծնվել եմ ամենավաղ ժամանակներում և դարերի միջով, սերնդից սերունդ փոխանցվելով՝ հասել եմ մինչև ձեր օրերը : Ես սիրում եմ թափառել , ճամփորդել, լինում եմ տարբեր ժողովուրդների մոտ : Ինձ սիրում են մեծերը, և փոքրերը , որովհետև ես շատ հետաքրքիր եմ ու գրավիչ: Ես գովաբանում եմ բարին, ազնիվը, սակայն խարազանում եմ չարը, ագահությունը, ծուլությունը: Ես կախարդական եմ, երբեմն էլ հրաշքներ եմ գործում: Ինձ պատմում են, երգում, բեմադրում, կարդում, նաև գրում են: Ճիշտն ասած , սիրելի փոքրիկներ, ինքս էլ չգիտեմ ես լինում եմ, թե չեմ լինում:>>

- Ճանաչեցի՞ք արդյոք տիկնիկ մարդուկին: Ո՞վ է նա:
- Ի՞նչ է հեքիաթը:Ի՞նչ հեքիաթներ գիտեք: Ո՞ր հեքիաթն է ձեզ դուր եկել: Այդ հեքիաթի որ հերոսին եք ուզում նմանվել և ինչու՞:
- Ի՞նչ հեքիաթագիրներ գիտեք:

հեքիաթ

-Ո՞ր ուղղագրությանն է պատկանում հեքիաթ բառը: Թվարկել այդ ուղղագրությանը պատկանող այլ բառեր.

բամ**իա** տեխնոլոգ**իա**

էքսկուրս**իա** կր**իա**

խավ**իա**ր



Հեքիաթ բառով կազմել նոր բառեր.

Ասույթներ հեքիաթի մասին

Պաստառի ձևավորում <<Հեքիաթի տեսակները>>: Հեքիաթից վերցված նկարները աշակերտները կդասակարգեն ըստ տեսակների և կանվանեն հեքիաթը:

-Ի՞նչ է հեքաթը: Ինչպես են սկսվում, ավարտվում հեքիաթները:

1. Իմաստի ընկալում:

Մեթոդը՝ <<Ընտրովի ընթերցանություն>>,<<Դերային ընթերցանություն, խաղ>>

Կարդալ տղայի հղումը, ուղերձը:

Պատմել Ջաննի Ռոդարիի մասին:

- Բնագրի ընթերցում:
- Բնագրի ընտրովի ընթերցանություն՝ ընտրել և կարդալ այն տողերը, որոնք համընկնում են ձեզ ծանոթ հեքիաթի բովանդակությանը:

- Ո՞ր հեքիաթը <<չէր կարողանում>> պատմել պապիկը:

- Ձեր կարծիքով պապիկն ինչու <<չէր կարողանում >> պատմել հեքիաթը:

Բեմականացնել Շառլ Պերրոյի <<Կարմիր գլխարկը>> հեքիաթը:

Ֆիզկուլտ-դադար- Հեքիաթների աշխարհ

Բառային աշխատանք բնագրի բառահումքի շուրջ

աղջիկ յոթանասունվեց

հեք**իա**թ հարյ**ո**ւր

Ո՞րն է կոչվում բայ , ի՞նչ հարցերի է պատասխանում: Ասել բայեր, կազմել , բառակապակցություններ, նախադասություններ :

3. Կշռադատում:

-Ի՞նչ եք կարծում՝ սա պատմվածք է , թե՞ հեքիաթ :

-Ի՞նչ եք կարծում՝ ինչու՞ է պատմվածքն այդպես ավարտել:

Այսպիսով, դուք հասկացաք, որ եթե ունեք զարգացած միտք ու երևակայություն, ապա ինքներդ էլ կարող եք ձեր հեքիաթն ստեղծել այս հեքիաթային աշխարհում:

1. Գնահատում:

2. Տն. հանձն.- կարդալ , առաջ. 1:

Եզրակացություն

Իմ կարծիքով ոչ ստանդարտ, այլընտրանքային դասերը մշտապես կխթանեն դասավանդման գործընթացը: Այն աշակերտներին հնարավորություն կտա կառուցել իրենց պատասխանը, ոչ թե պարզապես առաջարկված տարբերակներից որևէ մեկը ընտրել: Ուսումնական նյութի դժվարությունները հաղթելու հարցում աշակերտին օգնելու առավել քիչ քննարկված մեթոդներից են նրա առջև իր ուժերը փորձարկելու, իր ուժերի առավելագույնը ներդնելու խնդիր դնելը, նրա համար դժվար խնդրի լուծման բերկրանքը բացահայտելը: Լավ ուսուցիչը գիտի այս գայթակղության ուժը: Աշակերտը պետք է ձեռք բերի աշխատանքի մեջ գլխովին թաղվելու զգացում, որպեսզի այդ կարողությունները կիրառի նաև ինքնուրույն աշխատանքի ժամանակ:

Այս եղանակով կխթանենք երեխայի արդեն վաղ հասակում գիտելիքներին հաղորդակից դարձնելու հնարավորությունը, և այդ հնարավորությունը հետագայում կօգնի նրան դառնալ կրթված մարդ:

Օգտագործած գրականության ցանկ

- <<Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի

մանկավարժական տեսություններ>> Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար

Երևան 2005թ.ակադեմիական խորհրդատու՝ Գ.Վարելա

- <<Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ,

գնահատում>> Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար >>

ԱՅՌԵՔՍ Երևան 2003թ.

3.
.<<Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին>> Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ Երևան 2004թ.
4.<<Գիտելիքների շտեմարան>>Ալբերտ Փարսադանյան Երևան 2003թ.

5.<<Մանկական գանձարան>> Տաթև գիտակրթական համալիր

6.Նախաշավիղներ 2015թ. 2016թ.

7.<<Բազմաբնույթ մտածողության տեսություն>>

Երևան 2001թ.

8.Психологический журнал N5 , 1991г.

9.<<Մանկավարժական նախաձեռնություն>> Մաս II, Երևան 2014թ. հայկական ասոցիացիա ՀԿ

- Մայրենի-4, մեթոդական ձեռնարկ Երևան 2009թ.Կ.Թորոսյան
- Հանրագիտարաններ